Հանրային տեղեկատվություն
և գիտելիքի կարիք

հասարակական կազմակերպության

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015

Բովանդակություն

Նախաբան 4

Փինք Արմենիայի մասին՝ հակիրճ 6

2014-2016թթ. ռազմավարական ուղղությունները 7

Փինք Արմենիայի արժեքները 8

Խորհուրդ, անդամներ և աշխատակազմը 9

Կամավորներ և պրակտիկանտներ 12

Մեր տարին Փինքում 13

Իրականացված ծրագրերը 14

Սոցիալական հզորացում և կրթություն 14

Իրավական կլինիկա (ՄԻԱՎ-ի նկատմամբ) առավել վտանգի ենթարկվող բնակչության համար 21

Ռազմավարական դատավարություններ 23

Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելում և հակազդում 24

Չպատմված պատմություններ. ատելությունից անդին 25

Հայաստանում և Վրաստանում ԼԳԲՏԻ համերաշխության ցանց 25

ԼԳԲՏ հավասարության արևելյան կոալիցիա 26

ՄԻԱՎ-ի կանխարգելումը ՏՍՏ-ների շրջանում 27

Ընդհանուր աջակցության դրամաշնորհ 28

ԼԳԲՏ հզորացմանն ուղղված միջոցառումներ 30

Հանրային միջոցառումներ 34

Զեկույցներ և հետազոտություններ 36

Դասընթացներ և զարգացում 40

ՓԻՆՔ Արմենիայի ներգրավվածությունը քաղաքացիական նախաձեռնություններում 41

Գենդերային արդարություն 42

Շնորհակալություն 44
Հակիրճ վիճակագրություն 45
8 փաստեր Փինք Արմենիայի մասին 46

Նախաբան

Սիրելի աջակիցներ և ընկերներ,

Հաճույքով ներկայացնում ենք Փինք Արմենիայի 2015թ. տարեկան զեկույցը մեր անդամներին, դոնորներին, ֆինանսավորողներին, գործընկերներին և աջակիցներին: Այս զեկույցը համապարփակ ամփոփում է 2015թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին մեր կազմակերպության աշխատակիցների և Խորհդի իրականացրած գործունեությունը:

Փինք Արմենիայի համար 2015թ. զարգացման ու աճի կարևոր տարի էր: Որպես ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանությանը զբաղվող համայնքահեն կազմակերպություն՝ Փինքը ներգրավված է ահռելի ծավալով աշխատանքների մեջ՝ սկսած կրթությունից և հայաստանյան հասարակության մեջ ջատագովության իրականացումից, մինչև խիստ կարևոր սոցիալական, իրավաբանական, առողջապահական և հոգեբանական ծառայությունների տրամադրումը ԼԳԲՏԻ համայնքին և այլ խոցելի խմբերին: Այդուհանդերձ, դեռ հսկայական ծավալի աշխատանք պետք է արվի, որպեսզի ԼԳԲՏԻ հավասարությունն իրականություն դառնա Հայաստանում և տարածաշրջանում:

Փինք Արմենիայի ռազմավարական պլանը ներդրվել է մեր աշխատակազմի և Խորհրդի կարճաժամկետ ու երկարաժամկետ աշխատանքներում ու նպատակներում, որոնց կազմակերպությունը հասնում է տարվա ընթացքում իրականացված բազմաթիվ միջոցառումների միջոցով՝ Հայաստանում և արտասահմանում գտնվող մեր համայնքի և գործընկերների անխոնջ աջակցությամբ:

Ցավոք, մենք չենք կարող խոսել անցյալ տարվա ձեռք բերված հաջողություններից՝ առանց անդրադառնալու Հայաստանում մի շարք մտահոգիչ զարգացումներին և մշտապես զգոն լինելու անհրաժեշտությանը: Այնուամենայնիվ, որպես կազմակերպություն և որպես համայնք, հետընթացները մեզ չեն վհատեցնում: Մենք ջանք չենք խնայում, որպեսզի մեր ձեռքբերումները լուսավորեն ապագան: Փինք Արմենիան 2015թ շարունակել է իրականացնել ԼԳԲՏ իրավունքների խթանմանն ուղղված աշխատանքները: Անցյալ տարի, ի հավելումն ԼԳԲՏ մարդու իրավունքների խթանմանն ուղղված Փինքի ադվոկացիոն գործողություններին և ԼԳԲՏԻ համայնքին տրամադրված ծառայություններին, մեր հասարակությունում ԼԳԲՏ մարդկանց տեսանելիության բարձրացմանը հատուկ ուշադրություն է դարձվել: Մենք նաև կազմակերպել ենք դասընթացներ և ուսուցողական հանդիպումներ Երևանի և մարզերի երիտասարդների, ինչպես նաև ԼԳԲՏԻ մարդկանց հետ տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների համար:

2015թ-ը մենք ամփոփեցինք տարվա ընթացքում իրականացված մեր ծրագրերի գնահատմամբ, ինչպես նաև ԼԳԲՏ համայնքի անդամների հետ կարիքների գնահատման իրականացմամբ՝ 2016թ. մեր աշխատանքները բարելավելու նպատակով:

Հուսով ենք, որ ձեզ դուր կգա 2015թ. տարեկան զեկույցը: Անհամբեր սպասում ենք 2016թ-ի էլ ավելի մեծ ձեռքբերումներին և հավասարությունն ու մարդու իրավունքները Հայաստանում և ամբողջ աշխարհում տոնելու առիթին:

Փինք Արմենիայի մասին՝ հակիրճ

10 տարի առաջ Հայաստանում դժվար կլիներ պատկերացնել, որ քվիր մարդիկ կխոսեն իրենց գոյության մասին, կարտահայտեն իրենց կարիքները կամ անգամ դժգոհությունները հայ հասարակության մեջ: Փինք Արմենիան գրանցվել է 2007թ. որպես ազգային կազմակերպություն՝ առաջ մղելու հավասարությունը, բազմազանությունն ու արդարությունը Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց համար: Այդ ժամանակվանից ի վեր Փինքը նվիրեց իրեն հասարակությանը, հատկապես երիտասարդներին կրթելուն, աշխատելուն՝ փոփոխությունների հասնելու համար՝ պայքարելով Հայաստանում հոմոֆոբիայի և խտրականության դեմ, որոնք էլ մարդու իրավունքների ոտնահարումների ու խախտումների հիմքն են: Համայնքահեն երիտասարդ կազմակերպությունից Փինքին հաջողվեց կարճ ժամանակահատվածում վերածել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հարգված կազմակերպության: Մենք ոչ միայն իրականացնում ենք ադվոկացիոն գործողություններ, կարողությունների զարգացում և հանրային միջոցառումներ, այլև տրամադրում ենք ծառայությունների ամբողջական փաթեթ Հայաստանում ԼԳԲՏ համայնքի համար: Փինք Արմենիան շարունակում է աջակցել ԼԳԲՏ մարդկանց տեսանելիության բարձրացմանը՝ համախմբելով ու հզորացնելով համայնքը: 2015թ. հատկապես կարևոր տարի էր Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց տեսանելիության բարձրացման առումով, և մենք շարունակելու ենք մեր աշխատանքն ապագայում՝ ստեղծելու երկիր, որտեղ մարդիկ կարող են ազատորեն ապրել՝ զերծ մնալով ամոթից, վախից ու խտրականությունից:

Փինք Արմենիայի տեսլականը

Ունենալ հասարակություն, որտեղ բոլոր մարդկանց իրավունքները պաշտպանված են, և յուրաքանչյուր ոք ընդունված է անկախ իր սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից և/կամ գենդերային արտահայտումից:

Փինք Արմենիայի առաքելությունը

Ստեղծել ապահով միջավայր ԼԳԲՏ անձանց համար՝ նրանց տրամադրելով իրավաբանական, հոգեբանական և սոցիալական պաշտպանվածություն և խթանելով նրանց բարեկեցությունը:

- *Հնարավորություն տալ Փինք Արմենիայի աշխատակիցներին և կամավորներին իրացնել իրենց ամբողջ ներուժը*

Փինք Արմենիայի հեռահար նպատակն է լինել ամբողջովին ներառական կազմակերպություն և ԼԳԲՏ համայնքում ու ավելի լայն հասարակությունում բազմազանության ներկայացուցիչ, որը առաջնորդում է մարդու իրավունքների և հավասարության շարժումը:

- *ԼԳԲՏ համայնքի հզորացում*

Փինք Արմենիան աշխատում է ԼԳԲՏ շարժումը զարգացնել տարբեր կոնկրետ ծրագրերի, գործողությունների և ծառայությունների տրամադրման միջոցով՝ նպատակ ունենալով լավացնել և կայունացնել լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր համայնքների առողջությունը և բարեկեցությունը:

- *ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող բնակչության և ԼԳԲՏԻ անձանց ջատագովություն և մարդու իրավունքների պաշտպանություն*

Այս ռազմավարական ուղղությամբ Փինք Արմենիան նպատակ է հետապնդում ջատագովել մարդու իրավունքների ստանդարտների, օրենսդրության և քաղաքականությունների համար: Ջատագովության ջանքերը ուղղված են ընդդեմ խարանին, խտրականությանն և նախապաշարմուներին, ատելության հիմքով հանցագործություններին, առողջության անհամաչափություններին, առողջապահության տվյալների հավաքագրմանն ու հետազոտությանը, բռնությանը, աշխատավայրում ԼԳԲՏ համայնքի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի (սեռական ծառայություն տրամադրողներ, թմրամիջոց գործածողներ, տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ և ՄԻԱՎ-ով ապրողներ) իրավունքների ոտնահարմանը:

«Ոչինչ մեզ համար առանց մեզ»-ը Փինք Արմենիայի սկզբունքն է, որը նշանակում է ԼԳԲՏ համայնքին՝ որպես առաջապահ իրավապաշտպաններ, ներգրավել ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանության և հավասարության շարժման մեջ:

Փինք Արմենիայի 4 հիմնարար արժեքներն են.

- բազմազանության, հավասարության, մարդասիրության հասկացում և ընդունում, սոցիալական արդարության և համաշխարհային արժեքների առաջնահերթություն,
- մարդու հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանք և ճանաչում՝ մասնավորապես շեշտադրելով հավասարության և խտրականությունից զերծ մնալու յուրաքանչյուր անձի իրավունքը,
- ԼԳԲՏ համայնքի շրջանակներում և առհասարակ հայաստանյան հասարակությունում քաղաքացիական ակտիվիզմի, մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների խթանում,
- համերաշխություն խոցելի խմբերի, քաղաքացիական հասարակության անդամների և շարժումների հետ, որոնք նպատակ ունեն մեր երկրում հասնելու ժողովրդավարության:

Խորհուրդը

Փինք Արմենիայի խոհուրդը կազմակերպության հիմնական ղեկավար մարմինն է: Կազմակերպության խորհուրդը հիմնականում պատասխանատվություն է կրում երկարաժամկետ պլանավորման, կազմակերպության բյուջեի ընդունման, ինչպես նաև միջոցների հավաքագրման գործունեության իրականացման համար: Փինք Արմենիայի խորհրդի կազմում ներգրվված են այն անձինք, որոնք տարիներ շարունակ իրենց առավելագույն ներդրումն են ունեցել կազմակերպության գործունեության մեջ: 2015թ. դրությամբ կազմակերպության Խորհրդի անդամներն են.

Նվարդ Մարգարյան
Հովհաննես Մադոյան
Մարինե Մարգարյան
Լարա Ահարոնյան
Մամիկոն Հովսեփյան

Մեր անդամները

2015թ. Փինքն իր դռները բացեց նոր անդամների համար և դիմումներ ստացավ հետաքրքրված ու շահագրգիռ անձանցից, որոնք իրենց ցանկությունը հայտնեցին դառնալ կազմակերպության Ընդհանուր Ժողովի մաս և ներգրավվել կազմակերպության որոշումների կայացման գործընթացին: Փինքի անդամակցության քաղաքականության համաձայն՝ անդամության հայտ կարող է լրացնել ցանկացած մարդ, որը առնվազն երկու տարի ներգրավված է եղել կազմակերպության գործունեության մեջ: Անդամության հայտերը ստանալուց հետո Փինքի Ընդհանուր Ժողովի երկու երրորդ ձայների առկայությամբ հաստատվում կամ մերժվում են նոր անդամության հայտերը: Անդամների թույլատրելի քանակը 30-ն է:

Հիմնական աշխատակազմը 2015-ին

Նվարդ Մարգարյան

Նվարդը Փինք Արմենիայի նախագահն է և վերահսկում է աշխատակազմի անդամների և կազմակերպության ամբողջ ծրագրային գործունեությունը: Տարբեր շահագրգիռ կողմերի հետ Նվարդը նաև համակարգում է կազմակերպության արտաքին հարաբերությունները և ապահովում է կազմակերպության ֆինանսական կայունությունը:

էլ. փոստ`nvard.margaryan@pinkarmenia.org

Մամիկոն Հովսեփյան

Մամիկոնը Փինք Արմենիայի գործադիր տնօրենն է և ղեկավարում է կազմակերպության ծրագրերը: Պատրաստում է ծրագրային փաստաթղթեր, զեկույցներ, գործողությունների պլանը և տեխնիկական փաստաթղթերը, ապահովում է ծրագրերի համապատասխանելիությունը տարբեր պահանջներին, պատրաստում է տարբեր նախագծերի գործողությունները, ապահովում է հետադարձ կապը և զեկույցներ տրամադրում դոնորներին:

էլ. փոստ` director@pinkarmenia.org

Նիկոլայ Հովհաննիսյան

2015թ. սեպտեմբերից Նիկոլայը Փինքի ծրագրի համակարգողն է, իսկ մինչ այդ, 2011թ-ից աշխատել է որպես ծրագրի օգնական: Նիկոլայը իրականացնում և գնահատում է ծրագրերը ըստ կանխորոշված ժամկետների, համակարգում է Փինքի Խորհրդի և դոնորների պլանավորած ծրագրերը, աջակցում է գործադիր աշխատակազմին՝ կառավարելու առաջադրանքները, ծրագրերն ու հաղորդակցությունը:

էլ. փոստ` kolya.hovhannisyan@pinkarmenia.org

Ռիմա Սարդարյան

Ռիման միացել է Փինքի թիմին 2015թ. սեպտեմբերից՝ որպես ծրագրի օգնական: Ռիման մշտադիտարկում է ծրագրի իրականացումը և ցուցաբերում է տեխնիկական աջակցություն, օգնում է կազմակերպել Փինքի դասընթացները և պատասխանատու է այլ նախատեսված միջոցառումների կազմակերպման համար:

էլ. փոստ` rima.sardaryan@pinkarmenia.org

Հեղինե Բաբայան

Հեղինեն Փինք Արմենիայում աշխատում է համայնքի հետ: Նա տարբեր միջոցառումներ է կազմակերպում ԼԳԲՏ անձանց համար, ներգրավում է ԼԳԲՏ անհատներին և համայնքին՝ ԼԳԲՏ հզորացմանն ուղղված գործունեության մեջ:

էլ. փոստ՝ heghine.babayan@pinkarmenia.org

Հովհաննես Իշխանյան

Հովհաննեսը «Ինչպես դու» էլեկտրոնային պարբերականի խմբագիրն է և պատասխանատու է էլ. պարբերականի և կայքի հրապարակումների բովանդակության վերահսկման և որակի համար: Նա ապահովում է նյութերի հետաքրքիր ու բովանդակալից լինելը, ինչպես նաև ՁԼՄ-ների և Փինքի հաղորդակցությունը ապահովող հիմնական աշխատակիցն է:

էլ. փոստ՝ editor@pinkarmenia.org

Կամո Դավթյան

Որպես ֆինանսական մենեջեր, Կամոն ապահովում է կազմակերպության ֆինանսական կայունությունը, կառավարում է ֆինանսական նախագծերը, մշակում է ֆինանսական ռազմավարություններ և առաջարկներ ֆինանսական միջոցների ու կազմակերպության բյուջեի համար: Նա նաև վարում է կազմակերպության հաշվապահական հաշվառումը, պատրաստում է ֆինանսական հաշվետվություններ, որոնք ներկայացնում է աշխատակազմին, Խորհրդին և դոնորներին:

էլ. փոստ՝ finmanager@pinkarmenia.org

Լուսինե Ղազարյան

Լուսինեն կազմակերպության իրավաբանն է 2011թ-ից: Մեր շահառուներին Լուսինեն տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն, փաստաթղթավորում է իրավունքների ոտնահարման դեպքերը, ուսումնասիրում է հավանական ռազմավարական գործերը և տրամադրում իրավաբանական աջակցություն:

էլ. փոստ՝ lawyer@pinkarmenia.org

Էռնա Բալասանյան

Էռնան Փինք Արմենիայի սոցիալական աշխատողն է և տրամադրում է խորհրդատվություն ԼԳԲՏ համայնքի անդամներին: Էռնան համա-

կարգում է կազմակերպության «Տեղեկատվության, կրթության, հաղորդակցության» կենտրոնի գործունեությունը, որտեղ այցելուները մասնակցում են դասընթացների, քննարկումների, ստանում են խորհրդատվություն և կազմակերպության կողմից տրամադրվող այլ ծառայություններ:

էլ. փոստ՝ socialworker@pinkarmenia.org

Լիլիթ Ավետիսյան

Լիլիթը Փինք Արմենիայի հոգեբանն է: Նա շահառուներին աջակցում է՝ տրամադրելով հոգեբանական խորհրդատվություններ, ֆասիլիտացնում է ինքնօգնության խմբերը և ապահովում է ծրագրի շահառուների պատշաճ ուղղորդման գործընթացը:

էլ. փոստ՝ lilit.avetisyan@pinkarmenia.org

Կամավորներ և պրակտիկանտներ

Կամավորները Փինք Արմենիայի համար կարևոր դեր ունեն: Ներդնելով իրենց ժամանակը, էներգիան և բազմաթիվ հմտությունները՝ կամավորները ոգևորություն են առաջացնում, բարձրացնում են համայնքի ներգրավվածությունը կազմակերպության գործունեության մեջ, տրամադրում են կարևոր նշանակություն ունեցող ռեսուրսներ կազմակերպության կարիքները բավարարելու համար:

2015թ-ին Փինքը հյուրընկալել է 9 միջազգային կամավոր և պրակտիկանտ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Կանադայից և Թուրքիայից, 15 տեղացի կամավոր և 3 սոցիալական աշխատանքի պրակտիկան Երևանի պետական համալսարանից, ովքեր հսկայական օգուտ տվեցին մեր ծրագրերին, նվիրվեցին և ընկղմվեցին կազմակերպության աշխատանքներում:

2015թ. կարևոր և հաջող տարի էր Փինքի համար, որը նշեց կազմակերպության գործունեության իր 8 ամյակը: Բայց 2015թ. նաև ցույց տվեց, որ դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու, որպեսզի Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ լինի հասկացվածություն և հավասարություն: Մայիսի 17-ին՝ Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը, մենք ծածանեցինք ԼԳԲՏ դրոշը Երևանի կենտրոնում: Հոկտմբերի 17-18-ը տեղի ունեցավ Հայաստանում ԼԳԲՏ առաջին ֆորումը, որը նպատակ ուներ հզորացնել ԼԳԲՏ համայնքը: Տարվա ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ուժեղացնելու, համախբելու և ԼԳԲՏ համայնքի տեսանելիությունը մեր հասարակությունում բարձրացնելու համար:

Կրթական, ժամանցային բազմաթիվ միջոցառումների միջոցով Փինքը ներգրավել է ԼԳԲՏ համայնքին իր գործունեության շրջանակներում: Անցկացվել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ տարբեր ոլորտների մասնագետների համար՝ ԼԳԲՏ մարդկանց հետ իրենց աշխատանքը բարելավելու նպատակով: Դասընթացներ են անցկացվել սոցիալական աշխատողների և հոգեբանների համար՝ ԼԳԲՏ մարդկանց հետ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար, լինելով ավելի զգայուն և տեղեկացված: Անցկացվել է նաև դասընթաց լրագրողների հետ այն մասին, թե ինչպես պետք է էթիկապես և մասնագիտորեն լուսաբանել ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերը:

Ողջ 2015թ. ընթացքում Փինքը շարունակել է տրամադրել իր շահառուներին հոգեբանական, սոցիալական աշխատողի և իրավաբանական ծառայությունների ամբողջական փաթեթ:

2015թ. Փինքը հրապարակել է «ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա» և «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրադրությունը Հայաստանում» զեկույցները: Փինքի գործունեության 7 տարիների հաշվետվությունը ևս հրապարակվել է 2015թ, որն առաջարկում է կազմակերպության գործունեության և հիմնական ուղղությունների մասին համապարփակ տեղեկատվություն:

Սոցիալական հզորացում և կրթություն

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 25.423.809 ՀՀ դրամ

Ֆինանսավորող՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարություն

«Սոցիալական հզորացում և կրթություն» ծրագիրը նպատակ ունի զարգացնել և համախմբել քաղաքացիական ակտիվիզմը Հայաստանում՝ հզորացնելով քաղաքացիական ակտիվիստներին և համայնքային առաջնորդներին ոչ խտրական մոտեցման, ժողովրդավարության հաջող և իրատեսական աճի համար:

Սույն ծրագրի շրջանակներում Փինքը հնարավորություն ունեցավ իր կողմից մատուցվող ծառայությունները համալրել սոցիալական աշխատողի և հոգեբանի ծառայություններով: Այսպիսով, 2013թ-ից ի վեր կազմակերպությանը հաջողվել է իր շահառուներին տրամադրել ծառայությունների ամբողջական փաթեթ:

Սույն ծրագրի շրջանակներում կազմակերպությունը նաև աշխատում է լրագրողների և քաղաքացիական ակտիվիստների հետ՝ նրանց հետ քննարկելով հանդուրժողականության, սեռականության և գենդերային հիմնախնդիրները: Ինչպես նաև տարբեր հետաքրքրված անձանց, շահառուների, քաղաքացիական ակտիվիստների համար կազմակերպությունը կազմակերպում և իրականացնում է տարբեր թեմաներով դասախոսություններ և քննարկումներ՝ որպես բանախոսներ հրավիրելով տարբեր փորձագետների:

«Ինչպես դու» էլեկտրոնային պարբերականը նույնպես հրապարակվում է այս ծրագրի շրջանակներում: Պարբերականը ընդգրկում է պատմություններ քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների, սեռական առողջության, գենդերային և սեռականությանն առնչվող խնդիրների, պատմության, մշակույթի և այլ թեմաների մասին, որոնք հետաքրքրում կամ մտահոգում են երիտասարդներին:

Տրամադրված ծառայություններ

Հոգեբանական ծառայություն

Լայնածավալ աուրիչ աշխատանքների և մատուցված ծառայությունների շնորհիվ՝ այս տարի կազմակերպության ծառայություններից օգտ-

վեցին ավելի շատ ԼԳԲՏ մարդիկ՝ համեմատած նախորդ տարիների:

Փինքի առաջարկած հոգեբանական խորհրդատվությունների ժամանակ օգտագործվում է հումանիստական-էքզիստենցիալ մոտեցումը, որը ենթադրում է, որ ամեն այցելու եզակի է իր արժեքներով և աշխարհընկալմամբ: Փինքում անցկացվող հոգեբանական աշխատանքներում օգտագործվում է դասական խորհրդատվության մոդելը:

Հոգեբանական խորհրդատվությունների գործընթացի ժամանակ հայտնաբերված և հասցեագրված առավել տարածված խնդիրները կապված են հոգեկան ու վարքային խանգարումների ախտանիշներով, ինչպիսիք են՝ ընդհանուր տագնապայնությունը, վարքագծային ինքնակառավարման զարգացման ցածր մակարդակը և սեռական վարքագծի հետ կապված խնդիրները: Միջանձնային խնդիրները, օրինակ՝ կյանքի տարբեր ոլորտներում ցածր ինքնագնահատականն ու ինքնավստահության պակասը, ինքնության ճգնաժամը, ապագայի մասին տագնապ առաջացնող զարգացած ադապտիվ մեխանիզմների պակասը, անհարմարությունը կապված սեռական կողմնորոշման հետ, հուզական վերահսկողության և արտահայտվելու մեխանիզմների պակասը, ընտանիքի անդամների հետ միջանձնային հարաբերություններում խնդիրները (կապված ազնվանալու հետ) նույնպես տարածված են:

2015թ. Փինքի հոգեբանը 149 անհատական խորհրդատվական հանդիպումների միջոցով հոգեբանական աջակցություն է տրամադրել 34 շահառուների: Մեր հոգեբանը նաև անցկացրել է «Սթրեսի կառավարման» վեց խմբային հանդիպումներ 9 ԼԳԲՏ անհատների հետ, ֆասիլիտացրել է բազմաթիվ այլ խմբային աշխատանքներ: «Սթրեսի կառավարման» հանդիպումների նպատակն էր բարձրացնել մասնակիցների իրազեկվածության մակարդակը սթրեսի, դրա հետևանքների մասին՝ առողջ կերպով սթրեսը կառավարելու հմտություններ և կարողություններ զարգացնելու միջոցով:

Սոցիալական աշխատողի ծառայություն

Փինքի սոցիալական աշխատողը աջակցել է ԼԳԲՏ մարդկանց առօրյա կյանքում իրենց խնդիրները հաղթահարելու գործում: Սոցիալական աշխատողը նաև օգնում է անհատներին և խմբերին վերականգնել կամ ընդլայնել իրենց կարողությունները սոցիալական գործառնման համար, աշխատում է ստեղծել հասարակական պայմաններ, որոնք կաջակցեն դրանց կարիքն ունեցող ԼԳԲՏ մարդկանց: Սոցիալական աշխատողի մոտ այցելող ԼԳԲՏ անհատների մոտ տարածված խնդիրները

ներառում են սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության պատճառով խնդիրները իրենց ընտանիքների, դասընկերների և այլոց հետ առօրյա կյանքում, աշխատանք գտնելու դժվարությունները և աշխատանք գտնելու համար կարողությունների ու հմտությունների զարգացումը, ժամանակավոր կացարանով ապահովելը:

2015թ. մեր սոցիալական աշխատողը 68 անհատական խորհրդատվական հանդիպումներ է ունեցել 15 ԼԳԲՏ անձանց հետ: Այդ հանդիպումների արդյունքում 5 ԼԳԲՏ անհատներ կարողացել են գտնել աշխատանք, մինչդեռ մյուսները հարթել են իրենց հարաբերությունները ընտանիքի անդամների և այլոց հետ: Որոշ այցելուների տրամադրվել է ժամանակավոր կացարան:

Իրականացված դասընթացներ

«Սոցիալական արդարությունը սկսվում է քեզանից» դասընթաց

«Սոցիալական արդարությունը սկսվում է քեզանից» դասընթացի նպատակն է համախմբել երիտասարդներին՝ քննարկելով սոցիալական արդարության թեման և մեր պատասխանատվությունը սոցիալական արդարությանը հասնելու գործում: Դասընթացի ընթացքում մասնակիցներին տրվում են սոցիալական արդարության տեսության մասին ակնարկներ, ներկայացում են տվյալներ տարբեր հետազոտություններից, իսկ մասնակիցները տարբեր վարժությունների միջոցով քննարկում են անարդարության տեղական իրավիճակներ: Դերախաղերի օգտագործման միջոցով խմբերը սկսում են քննարկել ԼԳԲՏ մարդկանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, սեռական ծառայություն տրամադրողների, տարբեր էթնիկ և ռասայական խմբերի և Հայաստանում այլ խոցելի խմբերի մասին, որոնք հաճախ ենթարկվում են խտրականության և անարդարությունների տարբեր դրսևորումների:

2015թ. անցկացվել է «Սոցիալական արդարությունը սկսվում է քեզանից» 16 դասընթաց Գետաշեն գյուղում, Երևան, Արմավիր, Ստեփանավան, Չարենցավան, Հրազդան, Ալավերդի, Էջմիածին, Սիսիան, Գորիս, Մեղրի, Կապան և Շուշի քաղաքներում: Ընդանուր առմամբ դասընթացներին մասնակցել է 245 մարդ, որոնցից 57-ը՝ Երևանից, իսկ 188-ը՝ Հայաստանի մարզերից և Շուշիից:

ԳԵՅԹ տարեկան երիտասարդական ճամբար

2015թ. հուլիսի 6-11-ը անցակցվեց ԳԵՅԹ (գենդեր, ակտիվիզմ, հանդուրժողականություն, հավասարություն) տարեկան երիտասարդական ճամբարը: Այս ճամբարն անցկացվում է 2011թ-ից սկսած և նպատակ ունի հզորացնել համայնքային առաջնորդներին և ակտիվիստներին, տալ նրանց գենդերային և քաղաքացիական հասարակության այլ խնդիրների մասին բարձրաձայնելու հմտություն և կարողություն, գտնել լուծումներ այդ խնդիրների համար, խթանել Հայաստանում քաղաքացիական ակտիվիզմը և մարդու իրավունքների պաշտպանությունը:

2015թ. անցկացված ճամբարին մասնակցել են 21 երիտասարդ

Երևանից և Հայաստանի մարզերից, ներառյալ՝ Գորիս, Մեղրի, Սևան, Թթու ջուր, Ջանֆիդա, Արարատ, Արենի և Ալավերդի քաղաքներից ու գյուղերից: 5-օրյա ճամբարի ընթացքում մասնակիցները կիսեցին իրենց փորձը, քննարկեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են կարծրատիպերը, նախապաշարմունքը և խտրականությունը, ժողովրդավարությունն ու քաղաքացիական հասարակությունը, արվեստը և ակտիվիզմը, սեռականությունն ու գենդերային հավասարությունը, առաջնորդությունը, հաղորդակցությունը, ծրագրի մշակումն ու կառավարումը: Ճամբարի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան հանդիպել կանանց իրավունքների, լրագրության, բնապահպանության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում ներգրավված մասնագետների հետ, որոնք կիսվեցին իրենց փորձով, գիտելիքով ու հմտություններով, պատասխանեցին մասնակիցներին հուզող հարցերին:

ԳԵՅԹ երիտասարդական ճամբարի մասնակիցները պատրաստեցին երեք հոլովակ անհանդուրժողականության, նախապաշարմունքի պատճառով առաջացող սոցիալական խնդիրների և ճամբարում ուսումնասիրած այլ հուզող թեմաների մասին:

Սոցիալական աշխատողների և հոգեբանների վերապատրաստում ԼԳԲՏ մարդկանց հետ աշխատելու համար

Փինք Արմենիան անցյալ տարի կազմակերպեց եռօրյա վերապատրաստման դասընթացներ հոգեբանների և սոցիալական աշխատողների համար: «ԼԳԲՏ անձանց հետ սոցիալական աշխատանքի և կիրառական հոգեբանության առանձնահատկությունները» խորագրով դասընթացը նպատակ ուներ լայնացնել և ընդլայնել սոցիալական աշխատողների և կիրառական հոգեբանների աշխատանքային հմտությունները ԼԳԲՏ մարդկանց հետ աշխատանքում: Դասընթացին մասնակցեցին մասնագիտական պրակտիկա ունեցող, ինչպես նաև համալսարանում և տարբեր հաստատություններում իրենց վերջին տարին սովորող սոցիալական աշխատողներ ու հոգեբաններ: Մասնակիցներին ներկայացվեցին մասնագիտական էթիկայի, ինչպես նաև միջազգային և ազգային մակարդակներում առկա ուղեցույցների և տարբեր ռեսուրսների

մասին նյութեր ու ներկայացումներ: Մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով մասնակիցների հետ նաև անցկացվեց սեռականության դասընթաց, կատարվեցին տարբեր դեպքերի ուսումնասիրություններ, մասնակիցները ներգրավվեցին դերախաղերի մեջ: Դասընթացի գնահատման արդյունքում մասնակիցներն արտահայտեցին իրենց բավարարվածությունը տրամադրված տեղեկատվության և ստացած հմտությունների նկատմամբ, կարևորեցին նման դասընթացների անցկացումը ԼԳԲՏ մարդկանց հետ աշխատելու և ծառայություններ մատուցելու գործում:

Մենք վստահ ենք, որ ապագա մասնագետների հետ նման աշխատանքների իրականացումը կհանգեցնի ԼԳԲՏ մարդկանց առավել որակյալ և պրոֆեսիոնալ ծառայություններ մատուցելուն: Նման կերպով մենք կարող ենք դրական ազդեցություն թողնել Հայաստանում տարբեր կառույցներից աջակցություն հայցող ԼԳԲՏ մարդկանց բարօրության վրա:

Սեռականության և ԼԳԲՏ հարցերի լուսաբանման վերաբերյալ դասընթաց լրագրողների համար

Հայաստանում լրագրողները շատ քիչ են ունեցել սեռականության և ԼԳԲՏ մարդկանց խնդիրներին առնչվող դասընթացներին մասնակցելու հնարավորություն: Սակայն, շատ կարևոր է, որ լրագրողները հասկանան ու ընդունեն, որ լրագրությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ ԼԳԲՏ մարդկանց կյանքի վրա, հաճախ ԼԳԲՏ մարդկանց դեմ բռնության պատճառ դառնալ, ինչին մենք նախկինում բազմիցս ականատես ենք եղել: Հայաստանում թշնամաբար տրամադրված մեդիա միջավայրի դեմ պայքարելու համար Փինքը կազմակերպեց ուսուցողական աշխատանքներ լրագրողների հետ՝ բարելավելու նրանց գիտելիքները այս թեմաների շուրջ և հիշեցնել նրանց որոշ լրագրողական էթիկական նորմեր՝ հույս ունենալով, որ ապագայում նրանք կշարունակեն զեկուցել ԼԳԲՏ խնդիրների մասին անկողմնակալ և անաչառ կերպով:

2015թ. դեկտեմբերի 18-20-ը Փինք Արմենիան կազմակերպեց սեռականության և ԼԳԲՏ հարցերի շուրջ դասընթաց 16 ՁԼՄ ներկայացուցիչ-

ների հետ: Դասընթացին մասնակցեցին և՛ անհատ լրագրողներ, և՛ լրագրողներ, որոնք ներկայացնում են տարբեր լրատվամիջոցներ: Դասընթացի ընթացքում քննարկվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են կարծրատիպերը, նախապաշարմունքն ու խտրականությունը, հոմոֆոբիան և դրա հետևանքները, մարդու սեռականությունն ու տարածված միֆերը ԼԳԲՏ մարդկանց մասին: Հայաստանում ԼԳԲՏ ներկա իրավիճակը քննարկելուց հետո դասընթացի ժամանակ քննարկվեցին ԼԳԲՏ հարցերը լուսաբանելու ժամանակ լրատվամիջոցներում հանդիպող խնդիրները, ԶԼՄ-ներում ներկայումս օգտագործվող և նախընտրելի տերմինաբանությունը, լրագրողական էթիկայի և ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ խտրականությունը:

Դասընթացի բոլոր վարժանքների ժամանակ կարևորվում էր լրագրողների դերը անհանդուրժողականության և հոմոֆոբիայի տարածման գործում, իսկ դասընթացից հետո 6 ամսվա ընթացքում բոլոր լրագրողները պետք է պատրաստեին նյութեր ԼԳԲՏ մարդկանց և իրավունքների մասին:

էլեկտրոնային պարբերական



«Ինչպես դու»-ն Փինքի պաշտոնական էլեկտրոնային պարբերականն է, որը նպատակ ունի ներկայացնել քաղաքացիական հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները, ներկայացնել թեմաներ, որոնք երկար տարիներ Հայաստանում մատնված են եղել լռության: Այն նպատակ ունի նաև խթանել քաղաքացիների մասնակցությունը մեր հանրապետությունում կատարվող քաղաքացիական փոփոխություններին, քաղաքացիների պայքարին՝ ուղղված անարդարությունների, անհանդուրժողականության և անհավասարության դեմ:

Պարբերականում ներկայացված է տեղեկատվություն հասարակության տարբեր հիմնախնդիրների և խոցելի խմբերի մասին, կազմակերպությունների և անհատների մասին, որոնք ունեն անգնահատելի ներդրում

ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ստեղծման և զարգացման գործընթացում:

2015թ. ընթացքում հրապարակվել են «Ինչպես դու»-ի երեք թողարկումներ, որոնք լուսաբանում են Հայաստանում քաղաքացիական հասարակության, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, իրենց տանից վտարված ԼԳԲՏ մարդկանց, հոմոֆոբիայի, ինքնատելության, աշխարհը փոխած տրանս մարդկանց, Հայաստանում գենդերային դերերի, ֆեմինիզմի և այլնի մասին: Այս բոլոր պատմությունները հնարավոր է կարդալ «Ինչպես դու»-ի կայքում (asyou.pinkarmenia.org):

Իրավական կլինիկա (ՄԻԱՎ-ի նկատմամբ) առավել վտանգի ենթարկվող բնակչության համար

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 5.300.704 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

Մարդու իրավունքների պաշտպանության հարցը ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող խմբերի (ներարկային թմրամիջոց օգտագործողներ, սեռական ծառայություն տրամադրողներ, տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ) և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար առանցքային և ռազմավարական նշանակություն ունի: Վերոնշյալ խմբերին պատկանող մարդիկ հիմնականում դուրս են մնում համապատասխան հանրային առողջապահության ծրագրերից, չեն ստանում աջակցություն և համապատասխան ծառայություններ:

Ավելին, ՀՀ-ում մարգինալացված այս խմբերը ենթարկվում են խտրականության և մարդու իրավունքների ոտնահարման հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Չնայած մեր հասարակությունում կան որոշակի կազմակերպություններ և ինստիտուտներ, որոնք փորձում են զբաղվել տվյալ մարգինալացված խմբերի իրավունքների պաշտպանությամբ, սակայն ոլորտում բացակայում է համակարգվածությունը, ինչպես նաև ծառայությունները հաճախ հասցեական և կոնկրետացված չեն, ինչի առկայությունը հնարավորություն կտար լուծել այս խմբերին անհանգստացնող հիմնախնդիրները: Խարանն ու խտրականությունը, հասարակության անհանդուրժող վերաբերմունքը այս մարդկանց նկատմամբ ոչ միայն մարդու իրավունքների ոտնահարման հնարավորություն է ստեղծում,

այլև խոչընդոտում է նրանց ներգրավվածությանը հանրային առողջության, ՄԻԱՎ-ի կանխարգելման, խնամքի և բուժման ծրագրերում ու ծառայություններում:

Ծրագրի շրջանակներում Փինքն ու «Իրական աշխարհ, իրական մարդիկ» կազմակերպությունները նպատակ են հետապնդում համակարգված, նպատակաուղղված և կոմպետենտ իրավական ծառայությունների տրամադրման միջոցով ընդլայնել առավել վտանգի ենթարկված բնակչության ներգրավումը ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերում: Կազմակերպություններն այս ծրագրի իրականացմամբ նպատակ ունեն նաև արդար, հասարակական և ռազմավարական դատավարության միջոցով ստեղծել հիմքեր քաղաքականության, օրենքների և առկա պրակտիկաներ փոփոխման ջատագովության համար:

Իրավաբանական ծառայություն

Փինք Արմենիան տրամադրում է իրավաբանական ծառայություն տեղի հայ ԼԳԲՏ համայնքի կարիքներին համապատասխան՝ իրավաբանական խորհրդատվություն, հայտադիմումների, բողոքարկումներ և այլ անհրաժեշտ փաստաթղթերի կազմում, այցելություններ ոստիկանական բաժանմունքներ, եթե շահառուն ապօրինի կերպով բերման է ենթարկվել ոստիկանության բաժին, քաղաքացիական կամ քրեական դատավարությունների ընթացքում շահառուի շահերի ներկայացում դատարանում և մարդու իրավունքների մասին տեղեկատվության տրամադրում: Իրավաբանական ծառայությունները տրամադրվում են ԼԳԲՏ անհատներին, պալիատիվ խնամքի կարիք ունեցող մարդկանց, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել խոցելի խմբերին:

Հաճախ հանդիպող խնդիրները, որոնց հանդիպում են ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, բժշկական խնամքի և ծառայությունների մերժումն է իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի պատճառով, գաղտնիության իրավունքի խախտումը (մասնավորապես ՄԻԱՎ կարգավիճակի), խնդիրները, որոնք առաջանում են ընտանեկան հարաբերություններում, ինչպիսիք են ամուսինների համատեղ սեփականության բաժանումը և երեխաների խնամքը, ալիմենտի վճարման հետ կապված խնդիրները: Այս խնդիրներով Փինքի իրավաբանական ծառայություններից օգտվել են վեց ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ:

Սեքս աշխատողները, որոնք գալիս են Փինք իրավաբանական ծառայությունից օգտվելու համար, պնդում են, որ իրենց հիմնական

խնդիրները կապված են ոստիկանության բացասական վերաբերմունքի հետ, մասնավորապես, երբ խոսքը ֆիզիկական և հոգեբանական բռնության և անհիմն ազատազրկման դեպքերի մասին է: Որոշ սեռական ծառայություն տրամադրողներ զեկուցում են ոստիկանության կողմից իրենց նկատմամբ վիրավորանքի, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերի մասին: 2015թ. չորս սեռական ծառայություն տրամադրող է դիմել Փինքին այս խնդիրներով:

Պալիատիվ խնամքի կարիք ունեցող վեց մարդ է դիմել Փինքի իրավաբանական ծառայությանը: Դիմողների խնդիրները կապված էին ափիոնային ցավազրկող դեղերի մատչելիության և բժիշկների կողմից նշանակված ոչ ադեկվատ ցավազրկող դեղորայքի հետ:

Քառասունվեց ԼԳԲՏ մարդ օգտվել է Փինքի իրավաբանական ծառայությունից՝ ֆիզիկական և հոգեբանական բռնության, սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության բացահայտման շանտաժի ու սպառնալիքի, սոցիալական ցանցերում ատելության խոսքի, սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ատելության հանցագործությունների, ոստիկանության ոչ արդյունավետ գործողությունների՝ մասնավորապես քրեական գործերը մերժելու կամ կասեցնելու դեպքերով:

Ռազմավարական դատավարություններ

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 1.255.378 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

Իրավական կլինիկա ծրագրի շրջանակներում կազմակերպությունը իրականացնում է նաև հատուկ ընտրված դեպքերի ռազմավարական դատավարություն, որը հնարավորություն է տալիս ընտրված գործերը, դատարաններում վիճարկելով, զգալիորեն բարեփոխել օրենսդրությունը, պրակտիկան կամ բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը այս կամ այն խնդրի շուրջ: Չնայած այն հանգամանքին, որ ռազմավարական գործի հիմնական նպատակը կոնկրետ անձի բողոքի ներկայացումն է դատական ատյաններում, այնուամենայնիվ, այն նաև միտված է մարդկանց մի ամբողջ խմբի համար արդարադատության իրականացման ապահովմանը, որոնք կարող են հայտնվել նմանատիպ կամ համեմատելի իրավիճակներում: Ավելին, ռազմավարական դատավարությունը իրավական գործիք է, որը թույլ է տալիս մարդու իրավունքների խախտման անհատական

գործի վիճարկման միջոցով հասնել սոցիալական, իրավական և քաղաքական փոփոխության՝ ստեղծելով դատական նախադեպեր:

2015թ. Փինքը ունեցել է ռազմավարական դատավարության երկու դեպք, որոնք վերաբերում են «Իրավունք» թերթի կողմից դեռևս 17.05.2014թ. «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. Ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» հոդվածի և դրան հաջորդող նույնաբովանդակ հոդվածների հրապարակմանը, որով թերթը «սև ցուցակում» ներառած անձանց մեղադրում է «համասեռամոլության քարոզչության» մեջ, հորդորում է ցուցաբերել զրո հանդուրժողականություն և սահմանափակել նրանց հնարավորությունները՝ իրենց գործունեության և այլ շրջանակներում:

Այս դեպքերում ռազմավարական նշանակություն ունի այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում խտրականության և որպես դրա առավել խիստ դրսևորում՝ ատելության խոսքի հետ կապված հիմնահարցերը: Արդյունավետ իրավական կարգավորումների բացակայության հետևանքով իրավախախտները կարողացել են շրջանցել իրավախախտման էությունը և համապատասխան քաղաքացիաիրավական, ինչպես նաև քրեական պատասխանատվությունը:

Դեպքերից մեկը արդեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում է:

Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելում և հակազդում

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 582,770 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ ԻԼԳԱ-Եվրոպա

Մինչ ԼԳԲՏ մարդկանց դեմ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունները մնում են չլուծված, այսինքն՝ չգրանցված, չքննված, չպատժված, Հայաստանի հասարակությունը և բազմաթիվ պետական այրեր բազմաթիվ առիթներով նշում են, որ Հայաստանում ոչ մի ԼԳԲՏ անձ խնդիր չունի, և ԼԳԲՏ մարդկանց իրավունքները չեն խախտվում:

Այս ծրագրի նպատակն է ցույց տալ, որ ԼԳԲՏ անձանց խնդիրներն իրական են, ընդ որում ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ սեռական

կողմնորոշման և գենդերային ինքնության ենթադրյալ կամ իրական հիմքով քրեական գործողություններ են իրականացվում, որոնք շատ դեպքերում անտեսվում են: Այս ծրագրի նպատակն է նաև վերահսկել ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունները, ցույց տալ, որ խտրականության բացասական հետևանքները հարաբերականորեն ազդում են Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց վրա և ստիպել Հայաստանի իշխանություններին կատարել իրենց պարտականություններն այս առնչությամբ:

Չպատմված պատմություններ. ատելությունից անդին

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 838,614 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ ԱՄՆ պետքարտուղարություն

Հաշվի առնելով ՁԼՄ-ների ընձեռած հնարավորություններն ու Հայաստանում առկա ԼԳԲՏ իրավիճակը՝ այս ծրագրով մենք ձգտում ենք երկրում բարձրացնել ԼԳԲՏ համայնքի տեսանելիությունը՝ Հայաստանում արտադրելով ԼԳԲՏ մարդկանց մասին պատմող վավերագրական ֆիլմ: Ֆիլմը հանրության խորը հայացքը կհառի մարդկանց պատմությունների վրա, որպեսզի շեշտադրի Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ նախապաշարմունքների և սեռականության ու գենդերային ինքնության մասին իրազեկվածության պակասը:

Ֆիլմը նախատեսվում է թողարկել 2016թ. և նպատակ ունի կոտրելու Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց մասին առկա կարծրատիպերն ու նախապաշարմունքները, ավելի լայն հասարակական շերտ ներգրավել Հայաստանում ԼԳԲՏ խնդիրների վերաբերյալ քննարկումներում և մարդկանց մղելու փոփոխություն պահանջելուն:

Հայաստանում և Վրաստանում ԼԳԲՏԻ համերաշխության ցանց

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 9,506,966 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակ

Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակը նախաձեռնել է «Հայաստանում և Վրաստանում ԼԳԲՏԻ համերաշխության

ցանց» երեք տարվա ծրագիրը, որն իրականացվում է ՀԿ-ների աշխատանքային խմբերի կողմից՝ Վրաստանում՝ «Women's Initiatives Supporting Group (WISG)» և «Human Rights Education and Monitoring Center» (EMC), Հայաստանում՝ «Հասարակություն առանց բռնության» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (Փինք): ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականության դեմ պայքարը, նրանց պաշտպանության մակարդակի բարձացումը բոլոր տեսակի բռնություններից, ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության համապատասխան ապահովումը և վրացական ու հայկական հասարակություններում ԼԳԲՏ մարդկանց լիարժեք ներգրավվածության աջակցությունը աշխատանքային ցանցի հիմնական նպատակներն են:

Ծրագիրն ուղղված է հաղթահարելու հոմոֆոբիան/տրանսֆոբիան՝ հասարակության անընդհատ իրազեկվածության աճի, դրական տրամադրված ՁԼՄ-ների տեսանելիության, քաղաքացիական հասարակության համախմբման և մարդու իրավունքների շարժման և օրակարգի խթանման միջոցով:

Ծրագիրը 3 տարվա ընթացքում նախատեսում է թե՛ Վրաստանում, թե՛ Հայաստանում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցերի առավել ամբողջական հասկացում, ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ բարեկամական վերաբերմունքի ուղղորդում և համընդհանրայնացում, խտրականության դեպքերի նվազեցում և, ի վերջո, վերացում, ԼԳԲՏԻ իրավունքների պաշտպանության երաշխավորում և ԼԳԲՏԻ անձանց ամբողջական ներգրավվածություն հասարակության մեջ 3 տարի ժամանակահատվածում:

ԼԳԲՏ հավասարության արևելյան կոալիցիա

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 1,596,459 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ SIDA, RFSL-ի միջոցով

«ԼԳԲՏ հավասարության արևելյան կոալիցիա» ծրագիրը մի շարք ԼԳԲՏՔ կազմակերպությունների միավորման արդյունք է՝ ուղղված Ռուսաս-տանի հակագեյ քարոզչության ռեպրեսիվ օրենքին, և նպատակ ունի կանխել տարածաշրջանի այլ երկրներում նման օրենքների ընդունումը: ԼԳԲՏՔ մարդիկ տարածաշրջանի բոլոր երկրներում ենթարկվում են խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և իրավունքի ոտնահարումների, նրանց իրավունքները չեն ճանաչվում և չեն ընդունվում ո՛չ իշխանությունների,

ո՛չ քաղաքացիական հասարակության կողմից:

ԼԳԲՏՔ մարդկանց նկատմամբ իրականացվող խտրականության դեպքերի զեկուցումն ու մշտադիտարկումը կարևոր է, որպեսզի բարձրացվի իրազեկվածությունը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային և միջազգային կառույցների, իրավապահ մարմինների աշխատակիցների և հասարակության շրջանում: Ուստի, զեկուցելու և մշտադիտարկելու ռազմավարության մշակումը կարևոր նախապայման է արդյունավետ ջատագովության՝ քաղաքականություն մշակողներին խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ օրենքներ և քաղաքականություններ ընդունելու և իրականացնելու համար:

Այս ծրագիրը միտված է Հայաստանում ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ իրականացվող մարդու իրավունքների ոտնահարումների և նրանց նկատմամբ իրականացվող խտրականության դեպքերի հավաքագրման, կազմման, վերլուծության, փաստաթղթավորման, արտացոլ-ման ընդհանուր համակարգի ստեղծմանը՝ որպես ընդհանուր խտրականության դեմ ջատագովության հիմքեր: Ծրագիրը նախատեսում է նաև ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, Ռասիզմի ու անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի Հայաստանի կառավարության կողմից ԼԳԲՏ խնդիրների հետ կապված առաջարկությունների իրականացման վերահսկողություն:

ՄԻԱՎ-ի կանխարգելումը ՏՍՏ-ների շրջանում

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 13,692,723 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ ՀԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ

2007թ. սկսած Փինքը, նպատակ ունենալով կանխարգելել սեռական ճանապարհով փոխանցվող վարակները երիտասարդության շրջանում, իրականացնում է սույն ծրագիրը: Ծրագիրն իր մեջ ներառում է մի շարք բաղադրիչներ, որոնք են՝ հավասարակիցների ուսուցման մեթոդով երիտասարդների շրջանում սեռական առողջության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, սեռական առողջության վերաբերյալ դասընթացների անցկացումը, սեռական առողջության և, մասնավորապես, տեղեկատվական թերթիկների, պաստառների, հանրային միջոցառումների միջոցով սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍԵՓՎ) մասին տեղեկատվության տարածումը,

սեռական առողջության և մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ անանուն և գաղտնի խորհրդատվության տրամադրումը, պահպանակների, լուբրիկանտների և կրթատեղեկատվական նյութերի անվճար տրամադրումը՝ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելման նպատակով: Բացի այդ, Փինքը իրականացնում է ՍԵՓՎ-ների և ՄԻԱՎ-ի նկատմամբ անվճար և անանուն հետազոտության կազմակերպում, հանրային միջոցառումների կազմակերպում՝ սեռական առողջության և մարդու իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկման նպատակով, աութրիչ աշխատանք՝ սեռական առողջության ծրագրերում նոր մարդկանց ներգրավելու համար:

Կամավոր խորհրդատվություն և հետազոտություն

2015թ. Փինք Արմենիան շարունակեց տրամադրել անանուն և գաղտնի խորհրդատվություն սեռական առողջության ու սեռական ճանապարհով փոխանցվող վարակների մասին, բաժանել պահպանակներ, լուբրիկանտներ ու տեղեկատվական նյութեր, կազմակերպել սեռավարակների ու ՄԻԱՎ-ի նկատմամբ անվճար հետազոտություն՝ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների տարածումը կանխելու նպատակով:

2015թ. ծրագրի շրջանակներում բաժանվել են ավելի քան 25,650 պահպանակ ու լուբրիկանտ, 776 տեղեկատվական նյութեր ու թերթիկներ սեռական առողջության ու սեռական ճանապարհով փոխանցվող վարակների մասին: 149 մարդ անցել է կամավոր խորհրդատվություն և հետազոտություն (ԿԽՀ) ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, այս ծառայությունից 2015թ. օգտվել է 794 շահառու:

Ընդհանուր աջակցության դրամաշնորհ

Ծրագրի տարեկան ծախսերը՝ 18,633,859 ՀՀ դրամ
Ֆինանսավորող՝ Զիգրիդ Ռաուզինգ Թրասթ

Զիգրիդ Ռաուզինգ Թրասթը ստեղծվել է 1995թ. ամբողջ աշխարհում մարդու իրավունքների պաշտպանությանը օժանդակելու համար: Զիգրիդ Ռաուզինգ Թրասթը օգնել է Փինքին ծրագրերը կայունացնելու, այլ ֆինանսավորման հոսքեր կառուցելու, արդյունավետ ֆորումներ

կազմակերպելու, հետազոտություններ նախաձեռնելու, տեղի ԼԳԲՏ համայնքի համար սոցիալական, իրավական և առողջապահական ծառայություններ տրամադրելու գործում: Ընդհանուր աջակցության դրամաշնորհը լայնորեն օգտագործվում է ԼԳԲՏ համայնքային կենտրոնի և «Տեղեկատվության, կրթության, հաղորդակցության» կենտրոնում համայնքի հզորացման բազմաթիվ միջոցառումների կազմակերպման գործում:

Հայաստանում ԼԳԲՏ առաջին «Օրածան ֆորումը». #ՕիածանՀայաստան

2015թ. հոկտեմբերի 17-18 Լոռու մարզում Փինք Արմենիայի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանում ԼԳԲՏ առաջին ֆորումը, որը կրում էր «Օիածան» անվանումը:

Ֆորումի նպատակն էր կառուցել ԼԳԲՏ շարժումը Հայաստանում, քննարկել ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները և միասին մշակել ռազմավարություն և քայլեր՝ Հայաստանում հոմոֆոբիայի հաղթահարման համար:

Մասնակիցներից շատերը հայտնեցին, որ ֆորումը Հայաստանում ԼԳԲՏ շարժման նկատմամբ հույսով լցրեց, հատկապես դուր էր եկել այն փաստը, որ շարժմանը նոր դեմքեր են միացել ու շատերը պատրաստ են հրապարակայնորեն ազնվանալ (քամինգ աութ անել):

Միջոցառմանը ներկա էին մոտ 40 մասնակից, թե՛ ԼԳԲՏ համայնքից, թե՛ ԼԳԲՏ մարդկանց համախոհներից:

Հայաստանում հզոր ու կայուն ԼԳԲՏ համայնք ձևավորելու համար հույժ կարևոր է աջակցության ցուցաբերումը և այդ պատճառով 2015թ. զգալի ուշադրություն են դարձվել ԼԳԲՏ հզորացմանն ուղղված միջոցառումներին: Փինքի կողմից տրամադրված այլ ծառայություններին ի հավելումն, 2015թ. ընթացքում ԼԳԲՏ համայնքի համար մոտ 30 տարբեր շաբաթական միջոցառումներ են կազմակերպվել: Միջոցառումները բազմազան էին՝ կրթական դասընթացներից մինչև ժամանցային, ներառյալ այնպիսի հավաքներ, ինչպիսիք են գրականության ակումբը, «Առողջ անհատ անառողջ աշխարհում» հանդիպումների շարքը, ֆիլմի ցուցադրությունները, «Սեռականություն և կրոն»-ը, «Գույնզգույն կոնֆլիկտներ»-ը, «Զրույց սեքսի մասին» ԼԲՏՔ կանանց համար, բիսեքսուալություն ու նույնասեռ ամուսնությունների մասին քննարկումները, Քամինգ աութի օրվա միջոցառումը, սոցիալական արդարության և սեռականության մասին դասընթացները, անվտանգության ու ապահովության մասին դասընթացների շարքը, Փինքի իրավաբանի ու փաստաբանի հետ հանդիպումը, Փինքի հոգեբանի ու սոցիալական աշխատողի հետ զրույցը, սեռական ու վերարտադրողական առողջության և իրավունքի մասին դասընթացը ԳԲՏՔ տղամարդկանց համար, «Տարօրինակ ճաշկերույթները» և շատ ավելին: Ընդհանուր առմամբ, 2015թ. ընթացքում մոտ 500 ԼԳԲՏ մարդ մասնակցել է Փինքի ԼԳԲՏ հզորացմանն ուղղված միջոցառումներին:

Ուրախ ենք ավելացնելու, որ շատ միջոցառումներ կազմակերպել են ԼԳԲՏ համայնքի անդամները: 2015թ. իրականացված միջոցառումներից մի քանիսի մասին ներկայացված է ստորև:

Գրականության ակումբ

Համայնքի անդամների հետ համատեղ նախաձեռնությամբ Փինքը գրականության ակումբի հավաքներ անցկացրեց 2015թ. հունվար-մարտ ամիսներին, որն ուղղված էր հզորացնելու համայնքը գրականության, պատմվածքների, պոեզիայի և ֆեմինիստական գրվածքների թարգմանությունների միջոցով: Գրականության ակումբում մասնակիցները հավասարը հավասարին մեթոդով կիսում էին իրենց պատմությունները, իսկ հետո գրի առնում: 18 ԼԲՏՔ կանայք մասնակցել են գրականության ակումբին:

Զրույց սեքսի մասին

2015թ. հունիսին սեքսոլոգ Նարինե Ներսիսյանի հետ միասին կազմակերպվեց և իրականացվեց սեքսի մասին քննարկումը ԼԲՏՔ կանանց համար: Հանդիպմանը ներկա 28 ԼԲՏՔ կանանց հետ քննարկվեցին սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և ՄԻԱՎ-ի խնդրի, սեռական ցանկության և դրա պակասի, գրգռվածության և հաճույքի, օրգազմի, վագինիզմի, սեռական սադիզմի, սեռական մազոխիզմի և ֆետիշիզմի, կանանց սեռական ցանկության և սեռական կյանքի վրա դեպրեսիայի ազդեցությունները:

Բիսեքսուալության միջազգային օրը

Հաճախ տեղ գտնելով հոմոսեքսուալ և հետերոսեքսուալ կողմնորոշման միջակայքում՝ բիսեքսուալ մարդիկ շատերի կողմից դիտվում են որպես այս երկուսի խառնուրդ: Իրականում այդպես չէ: Տարածված թյուրըմբռնումների շնորհիվ բիսեքսուալ մարդիկ հաճախ պատկերվում են որպես չկողմնորոշված, ագահ, «կեղծ գեյեր» կամ էլ տենդենցով տարված հետերոսեքսուալներ: Կան բազմաթիվ սաստիկ վնասակար կարծրատիպեր, որոնք բխում են երևույթի նկատմամբ սխալ պատկերացումներից, և որոնց բախվում են բիսեքսուալ մարդիկ: Բիսեքսուալները երբեմն այդ նույն կարծրատիպերին բախվում են հենց ԼԳԲՏ համայնքի կողմից: Այս թյուրըմբռնմանը և նախապաշարված մոտեցմանը հակազդելու համար սեպտեմբերի 23-ին Փինքը կազմակերպեց «կենդանի գրադարան» միջոցառումը՝ նպատակ ունենալով ԼԳԲՏ մարդկանց շրջանում բարձրացնել իրազեկվածությունը բիսեքսուալության, բիսեքսուալ մարդկանց և բիֆոբիայի մասին: Միջոցառմանը հրավիրվել էին 4 խոսնակ, որոնք լսեցին և պատասխանեցին ԼԳԲՏ մարդկանց հարցերին, ընկալումներին ու կարծիքներին: Այս միջոցառմանը մասնակցեցին 24 ԼԳԲՏՔ անհատներ: Մենք հավատում ենք, որ կարող ենք հակազդել բիսեքսուալության մասին տեղեկատվության պակասին, և որ այն պետք է սկսենք ԼԳԲՏ մարդկանցից:

Անգլերենի ակումբ

2015թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Դեպի Հայք» կազմակերպությունից Փինք եկած կամավորները ԼԳԲՏ մարդկանց համար ստեղծեցին

անգլերենի ակումբ: Դասերն անցկացվում էին շաբաթական երկու անգամ, որոնց ժամանակ քննարկվում էին քերականությունը, բառապաշարը և խոսակցական լեզուն: Ժամանակի ընթացքում լեզվի ակումբը դարձավ ԼԳԲՏ խնդիրներ, ֆեմինիստական գրականություն, պոեզիա, ֆիլմեր և երաժշտություն քննարկելու հարթակ:

Քամինգ աութ (ազնվանալու) մոնոլոգներ Փինքում

2015թ. հոկտեմբերի 11-ի նախօրեին ԼԳԲՏ համայնքի անդամներն ու համախոհները Փինքում նշեցին ԼԳԲՏ մարդկանց համար միջազգայնորեն ճանաչված ազգային քամինգ աութի օրը:

Ավելի քան 40 ԼԳԲՏ մարդ և համախոհ հավաքվեց՝ կիսելու քամինգ աութի պատմությունները՝ իրենց ընտանիքներին և ընկերներին, և լսելու մյուսների փորձը: Ներկաների պատմությունները տարբեր էին՝ դրական ու ոգևորող, ճնշող ու տխուր: Քամինգ աութը երբեք հեշտ չէ, բայց մենք կարող ենք ոգեշնչվել մյուսներից ու իրենց փորձից: Մասնակիցներից մեկը մոնոլոգների միջոցառման ժամանակ ասաց. «Քամինգ աութը կօգնի ձեզ ազատվել վախի, սթրեսի ու դեպրեսիայի բեռից: Սակայն շատ կարևոր է հաշվի առնել դրա համար համապատասխան ժամանակը, որոշել, թե արդյոք ազնվանալու համար ճիշտ ժամանակն է»:

Օրը եզրափակվեց համայնքի կողմից համայնքի համար սաքսոֆոնի և կիթառի կենդանի հնչյուններով:

Անվտանգության դասընթացներ ԼԳԲՏ ակտիվիստների հետ

Նոյեմբերի վերջից սկսած Փինքը անվտանգության և ապահովության մասին դասընթացներ անցկացրեց ԼԳԲՏ համայնքի և համախոհների հետ: Նման դաընթացների կարիքն առաջացավ այն ժամանակ, երբ ԼԳԲՏ համայնքի դեմ իրականացված զանազան բացասական զարգացումների ականատեսը դարձանք՝ հատկապես այն բանից հետո, երբ հոկտեմբերին տեղի ունեցավ ԼԳԲՏ ֆորումը: Առաջին երեք դասընթացների ժամանակ մասնակիցները քննարկեցին ԼԳԲՏ մարդու իրավունքների ակտիվիզմի մեջ ներգրավված լինելու ժամանակ իրենց անվտանգությունն ապահովելու մասին ռազմավարություններ: Մասնակիցները կիսվեցին իրենց՝ ինքնապաշտպանության փորձով ու մարտավարությամբ, ներկայացվեցին «Front Line Defenders»-ի, «Heartland Alliance»-ի (HA) և «Protection International»-ի կողմից

մշակված նյութեր: Հաջորդ երկու դասընթացները նվիրված էին թվային անվտանգությանը: Որպեսզի ապահովության և անվտանգության դասընթացները լինեն համընդգրկուն, Փինքը նաև անցկացրեց համակցված անվտանգության մասին եռօրյա դասընթաց՝ ԼԳԲՏ ակտիվիստների և համախոհների համար:

Համակցված անվտանգության դասընթաց

Համակցված անվտանգության դասընթացը ներառում է ակտիվիստի աշխատանքի և կյանքի բոլոր ոլորտները՝ առողջությունից և անձնական ցանցերից, մինչև ապահով աշխատանքային միջավայր: Դասընթացի նպատակն էր «համակցված անվտանգության» հայեցակարգի մասին գիտելիքների ավելացումը և անձնական ու գործնական խնդիրներին հակազդելու համար համապատասխան կարողությունների զարգացումը:

2015թ. անցկացվել է համակցված անվտանգության երկու դասընթաց: Դրանցից առաջինը կազմակերպվել էր Բակուրիանիում, Վրաստանի հակաբռնության ցանցի հետ համատեղ, որին մասնակցել են ԼԳԲՏՔ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող 18 կին իրավապաշտպան Հայաստանից ու Վրաստանից:

Համակցված անվտանգության երկրորդ դասընթացը անցկացվեց Հայաստանում ԼԳԲՏՔ ակտիվիստների համար, որպես հնգօրյա անվտանգության դասընթացների շարունակություն: 13 ԼԳԲՏՔ ակտիվիստներ մասնակցեցին դասընթացին, որտեղ ապահովվեց անվտանգ միջավայր, և մասնակիցները քննարկեցին անձնական և մշակութային զգայուն թեմաներ՝ անձնական և խմբային առողջությունն ու բարօրությունը պահպանելուն, անձնական և կազմակերպչական խնդիրները տարբեր մեթոդներով հաղթահարելուն ուղղված ապագա աջակցության մեխանիզմներ:

«Հանդուրժողականություն և հոմոֆոբիա» թատրոն-քննարկում Երևանում

2015թ. նոյեմբերի 20-ին Փինք Արմենիայի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ «Հանդուրժողականություն և հոմոֆոբիա» թատրոն-քննարկումը:

Միջոցառումը թատերախաղի տեսքով էր: Այն սկսվում է ֆեյսբուքյան երկու օգտատերերի վիճաբանությամբ, որոնցից մեկը մարմնավորում է «հոմոֆոբիա»-ն, իսկ մյուսը «հանդուրժողականություն»-ը: Օգտատերերի վեճին միջամտում է «Գուգլ» որոնողական կայքին մարմնավորող կերպարը, որը պատասխանում է բանավիճողների բարձրացրած հարցերին:

Ներկաները հնարավորություն ունեցան մասնակցել քննարկմանը, մեկնաբանություններ անել, հարցեր բարձրացնել, ինչպես նաև հավանել կամ չհավանել մասնակիցների ներկայացրած փաստարկները:

Քննարկումից հետո մասնակիցներն իրենց գրավոր մեկնաբանություններն ու հավանությունները թողեցին արդեն իսկ բարձրաձայնված կարծիքներին և մտքերին:

Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը Հայաստանում

Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի ու բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա առիթով Երևանում տեղի ունեցան մի շարք ադվոկացիոն ու հանրային միջոցառումներ: Օրվա մասին Փինք Արմենիան հաջողությամբ բարձրացրեց հասարակության տարբեր զանգվածների իրազեկվածությունը:

Օրվան ընդառաջ, որպես փողոցային արվեստ ակտիվիստները հայերենով Երևանի փողոցներում տարածեցին Stonewall-ի «Ոմանք գեյ են, թեթև տարեք» գրությունը:

Մայիսի 17-ին հոմոֆոբիայի և տրանֆոբիայի դեմ միջազգային օրվա առիթով Փինք Արմենիան Հայաստանի նախագահին, մի քանի նախարարություններին ու պատգամավորներին ուղարկված նամակով հորդորել էր սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրա-

կանության բացառման դեմ օրենսդրական կարգավորումներ ապահովել և մշտադիտարկել նրանց նկատմամբ խտրականության դեպքերը:

Պետական պաշտոնյաներին Փինքը նաև ուղարկել էր հոմոֆոբիայի մասին տեղեկատվական գրքույկներ, խտրականության ու բռնության ենթարկված ԼԳԲՏ մարդկանց անձնական պատմություններով բացիկներ:

2015թ. Մայիսի 17-ին Փինքի ակտիվիստները Երևանի սրտում՝ Հյուսիսային պողոտայում բարձրացրին ԼԳԲՏ դրոշը: Այս ֆլեշ մոբի նկարները համացանցում դարձան բացասական արձագաների և ակտիվիստներին ուղղված ատելության խոսքի պատճառ:

2015թ. Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը եզրափակելու համար տեղի ունեցավ փակ միջոցառում, որին մասնակցեցին ավելի քան 120 ԼԳԲՏ մարդ և համախոհ: Հայաստանում ԼԳԲՏ համայնքը հազվադեպ է կարողանում ապահով ու անվտանգ միջավայրում արտահայտել իրեն, այնուամենայնիվ Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը նշվեց բաց ու ազատ միջավայրում:

ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա. հետազոտություն



Փինք Արմենիան և «Սոցիոսկոպ» հասարակագիտական հետազոտությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ-ները պատրաստել են Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա ԼԳԲՏ էմիգրացիայի ազդեցության վերաբերյալ զեկույց: Նախագծի նպատակն էր հետազոտել 2011-2013թթ. ընթացքում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ առկա խտրականության հետևանքով ԼԳԲՏ անձանց անվերադարձ արտագաղթի ազդեցությունը Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա և արտացոլել այդ փոփոխությունները երկարաժամկետ հեռանկարում:

Այս հետազոտության հաշվարկները ցույց են տալիս, որ 2011-2013թթ. արտագաղթած միջին վիճակագրական մեկ հայաստանցու կրթության համար ծախսվել է առնվազն 3545 ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Մոտավոր գնահատումների համաձայն՝ խտրականության պատճառով 2011-2013թթ Հայաստանից արտագաղթել է մոտ 5891 ԼԳԲՏ հայաստանցի, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ արտագաղթողների՝ միայն կրթության գծով ներդրումների մասով հասարակությունը միանվագ կորցրել է մոտ 21 միլիոն դոլար: Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի չստացված եկամուտներին, ապա հաշվարկների համաձայն՝ արտագաղթողի հեռանալուց մեկ տարվա ընթացքում 2011-2013թթ. Հայաստանը չի ստացել լրացուցիչ մոտ 88 միլիոն, 365 հազար ԱՄՆ դոլար: Սա արտագաղթելուց միայն մեկ տարի անց հաշվարկվող վնասն է, սակայն իրականում այդ վնասն առկա է նաև արտագաղթողի՝ մինչև թոշակի անցնելն ընկած ժամանակահատվածի բոլոր տարիներին:

Իսկ բյուջեի եկամուտները 2011-2013թթ. բոլոր 3 տարիներին միասին վերցրած կարող էին մոտ 20 միլիոն դոլարով մեծ լինել, եթե խտրականության պատճառով հեռացած ԼԳԲՏ անձինք մնային Հայաստանում: 2011-2013թթ. ԼԳԲՏ 5891 անձանց արտագաղթի արդյունքում

պետական բյուջեն առաջիկա ավելի քան 36 տարիների ընթացքում (մինչև թոշակի անցնելը) կկորցնի մոտ 2 միլիարդ դոլար եկամուտ՝ 2014թ. հունվարի 1-ի գնողունակությամբ:

Առաջիկա 12 տարիներին 2014-2025թթ. (եթե ընդունենք, որ մոտակա տարիներին Հայաստանից արտագաղթի տեմպը կպահպանվի 2011-2013թթ. միջին տարեկանի չափով (39273 մարդ), ՀՆԱ աճը կլինի մոտ 5 տոկոս, իսկ PPP (գնողունակության համարժեք)-ի գործակիցը կմնա անփոփոխ) ԼԳԲՏ անձանց արտագաղթի պատճառով ՀՆԱ-ն կունենա մոտ 3 միլիարդ դոլարի կորուստ՝ 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ և PPP-ով ճշգրտված, իսկ բյուջեն՝ 370 մլն դոլար՝ հաշվարկված 2014-ի հունվարի մեկի գնողունակությամբ:

Ամբողջական զեկույցը բաղկացած է սոցիոլոգիական ուսումնասիրությունից և տնտեսական գնահատումից:

ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում. տարեկան զեկույց

Փինք Արմենիան թողարկեց «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2014թ. տարեկան զեկույցը»: ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը Հայաստանում շարունակվում է համատարած բնույթ կրել, և պետությունը որևէ քայլ չի ձեռնարկում նրանց նկատմամբ բացասական վերաբերմունքը նվազեցնելու և իրավունքները պաշտպանելու համար: Դեռ հակառակը, իշխող կուսակցության անդամները, պետական պաշտոնյաները և իշխանությանը կից լրատվամիջոցները չեն դադարում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության կոչերով հանդես գալ, որը ամրապնդում է երկրում անպատժելիության մթնոլորտը:

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտումներին մեծապես նպաստում է խտրականությունն արգելող օրենսդրության և խտրականության համար պատասխանատվության մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև գործող օրենսդրական դաշտի անկատարու-

թյունը, որը ԼԳԲՏ անձանց ավելի խոցելի է դարձնում:

Ավելին, խտրականությունն արգելող իրավական մեխանիզմների, ինչ-պես նաև ընդհանուր քաղաքականության բացակայությունը նպաստում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ կատարվող հանցագործությունների ոչ պատշաճ որակմանը, քննությանը և մեղավոր անձանց պատասխանատվությանը, քանի որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով անձի նկատմամբ հանցագործությունը չի պաշտպանվում ՀՀ օրենսդրությամբ:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքն արգելող օրենսդրության բացակայությունն էլ ավելի է ամրապնդել պետական մարմինների ներկայացուցիչների, հանրության հեղինակությունը վայելող անձանց, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից ատելություն քարոզող հայտարարություններով հանդես գալու հնարավորությունը՝ այն ներկայացնելով խոսքի ազատության համատեքստում:

Այս զեկույցն ամփոփում է Փինք Արմենիայի 2014թ. արձանագրած և փաստաթղթավորած դեպքերը, ԼԳԲՏ անձանց հետ իրականացված հարցազրույցների արձանագրությունները, դատական գործերի, համացանցի և այլ զեկույցների ուսումնասիրություններից ստացված տվյալները:

2014թ. իրավունքների ոտնահարման հարցով Փինք Արմենիա է դիմել 44 մարդ, որոնց իրավունքի խախտումների դեպքերն այս կամ այն կերպով կապված են դիմողների սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հետ: Զեկույցում ցույց է տրվում, թե ԼԳԲՏ անձանց հետ փոխհարաբերություններում ինչ խախտումներ է կատարել պետությունը, իրավունքների ոտնահարման ինչպիսի բնույթի դեպքեր են արձանագրվել 3-րդ կողմի անձանց հետ փոխհարաբերություններում ու թե բոլորի համար հավասար հնարավորություններ ստեղծելու պետության ձախողումը ինչ իրադրության է հանգեցրել:

Զեկույցի վերջում զետեղված են առաջարկություններ պետական մարմիններին, զանգվածային լրատվության միջոցներին, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին, որոնց իրականացումը հնարավորություն կտա հասարակությունում ստեղծել ապահով միջավայր ԼԳԲՏ անձանց համար, որտեղ նրանք հանդես կգան որպես հասարակության լիիրավ անդամներ և հնարավորություն կունենան արդյունավետ իրացնելու իրենց իրավունքներն ու ազատությունները:

ՓԻՆՔ Արմենիայի 7 տարվա (2007-2014թթ.) ծրագրային և ֆինանսական հաշվետվություն

2015թ. դեկտեմբերի 14-ին լրացավ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի հիմնադրման և գործունեության 8-րդ տարին: Կազմակերպության տարեդարձի կապակցությամբ մենք պատրաստեցինք «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության նախորդ յոթ տարիների (2007-2014թթ.) գործունեության հաշվետվությունը, որը հնարավորություն է տալիս համապարփակ պատկերացում կազմել անցած տարիների ընթացքում մեր կազմակերպության գործունեության ուղղությունների, իրականացրած ծրագրերի և արդյունքների մասին:

Սույն զեկույցն ամփոփում է կազմակերպության անցած ուղին, ինչպես նաև հակիրճ ներկայացնում է կազմակերպության պատմությունը, նախորդ յոթ տարիների ընթացքում կազմակերպության կողմից իրականացված ծրագրերը, կազմակերպության խորհուրդն ու աշխատակազմը: Զեկույցում ամփոփում ենք նաև կազմակերպության նախորդ յոթ տարիների ֆինանասավորման աղբյուրներն ու կազմակերպությանը տրամադրված գումարները:

Փինք Արմենիայի առաջին ռազմավարական ուղղությունը աշխատակիցների և կամավորների համար իրենց ներուժին հասնելու հնարավորություն ստեղծելն է: Այս առումով 2015թ. հիանալի տարի էր, քանի որ և՛ աշխատակազմի անդամները, և՛ կամավորները ունեցան բազմաթիվ հնարավորություններ իրենց մասնագիտական զարգացման համար: Մեր աշխատակազմը, անդամները և կամավորները հնարավորություն ունեցան մասնակցել տարբեր դասընթացների, կոնֆերանսների, հանդիպումների և էրասմուս ծրագրերի՝ ուղղված իրենց կարողությունների զարգացմանը և մասնագիտական աճին:

Փինքի աշխատակազմը, անդամները և կամավորները 2015թ. մասնակցեցին տեղական և միջազգային հետևյալ կոնֆերանսներին և հանդիպումներին՝ «Ծիածանի առաջնորդները»՝ RFSL-ի կողմից առաջնորդության վերապատրաստման ծրագիր ակտիվիստների և համաշխարհային ԼԳԲՏ շարժման առաջնորդների համար, «Հավասարություն բոլորի համար» Global Human Rights Defense կազմակերպության դասընթաց, որի նպատակն էր երիտասարդ աշխատողների և առաջնորդների կարողությունների զարգացումը՝ կազմակերպության համար իրավունքների վրա հիմնված շահերի պաշտպանության արդյունավետ ռազմավարություններ մշակելու գործում, InsightEPD-ի կազմակերպած «Մարտահրավեր» դասընթացը՝ փոփոխություններ

բերողների աջակցության համակարգերի և համագործակցություն ստեղծելու մասին, EQUITAS-ի 36-րդ միջազգային մարդու իրավունքների վերապատրաստման ծրագիրը, «Ընտանեկան բռնության ոլորտում ծառայությունների տրամադրում» դասընթացը՝ «Կանանց աջակցման կենտրոն»-ի կողմից, որի ժամանակ քննարկվել են բռնության տեսակները, տուժող խմբերը, ռիսկի գնահատման և ռիսկին հարակից այլ հարցեր, ԱՄՆ Պետդեպարտամենտի «Միջազգային առաջնորդ այցելուների ծրագիրը», ԻԼԳԱ Եվրոպայի 2015թ. տարեկան կոնֆերանսը, RFSL-ի «ԼԳԲՏ հավասարության արևելյան կոալիցիաե դասընթացը և մի շարք այլ կոնֆերանսներ, դասընթացներ ու հանդիպումներ Հայաստանում և արտերկրում:

Մենք վստահ ենք, որ գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, որոնք ձեռք են բերվում այս հանդիպումների միջոցով, կծառայեն տեղի ԼԳԲՏ համայնքի կարիքներին և կխթանեն շարժման հետագա զարգացմանն ու կազմակերպմանը:

Փինք Արմենիայի ներգրավվածությունը քաղաքացիական նախաձեռնություններում

Քաղաքացիական նախաձեռնությունները Հայաստանում հասցեագրում են տարբեր խնդիրներ՝ սոցիալ-քաղաքականից մինչև տնտեսական և բնապահպանական: Փինքը ներգրավված է եղել Հայաստանում մի շարք քաղաքացիական նախաձեռնություններում և շարժումներում 2012թ. սկսած, երբ ձևավորվեց «Մաշտոցի պուրակի» շարժումը՝ ուղղված Երևանի կենտրոնում հանրային զբոսայգու ոչնչացման դեմ: 2015թ. Փինքը ակտիվորեն ներգրավվել է մի շարք նախաձեռնություններում, ներառյալ Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ զանգվածային բողոքի ցույցերին, հայտնի որպես «էլեկտրիկ Երևան»: Փինք Արմենիայի անդամները ներգրավված են եղել էլեկտրիկ Երևանի շարժման կայքի նախաձեռնման և աշխատանքների իրականացման մեջ, որը, հակակշռելով շարժման մասին ապատեղեկատվությանը, օգնել է տարածել չեզոք, արժանահավատ տեղեկատվություն: Փինք Արմենիայի անդամները նաև մեծ դեր են խաղացել «Ոչ»-ի քարոզարշավում, որը պայքարում էր 2015թ. դեկտեմբերին անցկացվող սահմանադրական հանրաքվեի ընդունման դեմ: Փինք Արմենիայի անդամները ներգրավված էին նաև որպես դիտորդներ հանրաքվեի ընթացքում և նպաստել են ընտրախախտումների բացահայտմանը:

Որպես «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»-ի անդամ և համահիմնադիր, կոալիցիայի շրջանակներում Փինքը ձգտում է պաշտպանել կանանց իրավունքները և վերջ դնել ընտանեկան բռնությանը, ինչպես նաև ջատագովել Հայաստանում «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» օրենքի ընդունումը:

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»-ն գործում է տարբեր մակարդակներում՝ կենտրոնացնելով իր ջանքերը հանրային կարծիքի ձևավորմանը, առկա սեքսիստական, հայրիշխանական մտածելակերպը փոխելուն:

2015թ. կոալիցիան աշխատել է ընտանեկան բռնության տեսանելիության բարձրացման, հանրային և սոցիալական գործողությունների միջոցով խնդրի մասին իրազեկվածության բարձրացման, ընտանեկան բռնության դեպքերի մասին ԶԼՄ-ների ուշադրությունը գրավելու, դատավարությունների մշտադիտարկման ուղղությունների վրա: Կոալիցիան աշխատել է նաև քաղաքականություն մշակողների և այլ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ՝ Համընդհանուր պարբերական դիտարկման գենդերային հիմքով բռնությանն ու ընտանեկան բռնությանն առնչվող առաջարկությունների իրականացման և մշտադիտարկման համար:

Հանրային միջոցառումների՝ մամուլի ասուլիսների, հեռուստահաղորդումների, հոդվածների, հանրային քայլերթերի, բացօթյա ֆիլմերի

ցուցադրությունների և համերգների միջոցով մենք ասում ենք ո՛չ բռնությանը և շարունակում ենք բարձրացնել կանանց իրավունքների մասին իրազեկվածությունը կանանց և տղամարդկանց շրջանում: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»-ն կշարունակի գործադրել իր ջանքերը ուղղված կանանց նկատմամբ բռնությունը կանխելուն և Հայաստանում ընտանեկան բռնության զոհերին աջակցություն տրամադրելուն:

Հոկտեմբերի 1-ին կոալիցիան Երևանում և Հայաստանի մարզերում կազմակերպել է մի շարք հանրային միջոցառումներ՝ ճանաչելու ընտանեկան բռնության կանխարգելման ազգային օրը: Գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի 16 օրյակի շրջանակներում կոալիցիան ևս միջոցառումներ է կազմակերպել Երևանում և մարզերում: Գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի 16 օրյակի և մարզեր այցելության արդյունքում ավելի քան 5000 կանայք Հայաստանում տեղեկացան իրենց իրավունքների մասին և անմիջական կապ հաստատեցին կոալիցիայի անդամների հետ:

Գենդերի և գենդերային հավասարության թեման խորապես արմատավորված է Փինք Արմենիայի բոլոր միջոցառումներում ու գործողություններում՝ դասընթացներում և ճամբարներում, ադվոկացիայում և հանրային արշավներում:

Փինք Արմենիան երախտապարտ է իր կամավորներին, անձնակազմին, անդամներին ու Խորհրդին՝ Փինքի նպատակներին հասնելու համար տրամադրած ժամանակի, էներգիայի և ցուցաբերած աջակցության համար:

Մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիային, ՁԻԱՀ-ի խնդրի ջատագովության և հետազոտության խմբին, Հյուման ռայթս հաուս Երևանին և մեր աշխատանքում ներգրավված բոլոր կազմակերպություններին՝ իրենց համագործակցության, գործընկերության և աջակցության համար:

Փինքը շնորհակալ է ԻԼԳԱ Եվրոպային և իր անձնակազմին իրենց խորհուրդների, աջակցության և դժվարին պահին տրամադրած օգնության համար:

Շնորհակալություն «Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնին» (EHRAC)՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գործերում մեզ աջակցություն ցուցաբերելու համար:

Շնորհակալ ենք «Դեպի Հայք», «Հայ կամավորների միություն» կազմակերպություններին և Հրանտ Դինքի միջազգային հիմնադրամին՝ կամավորների տեղաբաշխման ժամանակ Փինք Արմենիային մշտապես հաշվի առնելու համար:

Հատուկ շնորհակալություն Հայաստանում մեր սիրելի ԼԳԲՏ համայնքին և համախոհներին իրենց մտքերով և Փինքին միշտ սիրով աջակցելու համար:

Շնորհակալ ենք նաև մեր դոնոր կազմակերպություններին իրենց նվիրվածության և տրամադրած ֆինանսական աջակցության համար:

- www.pinkarmenia.org կայքի այցելությունների ընդհանուր թիվը հասել է 47,075-ի
- Թողարկվել է «Ինչպես դու» էլ. պարբերականի 3 համար
- Առցանց շրջանառվել է 12 ԼԳԲՏ լրաթերթ
- 34 շահառուի հետ անցկացվել են 149 անհատական հոգեբանական խորհրդատվական հանդիպում
- 15 շահառուի հետ անցկացվել է 68 անհատական սոցիալական աշխատողի հանդիպում
- 46 ԼԳԲՏ անհատներ և «Իրավական կլինիկա» ծրագրի այլ խմբերի 25 շահառուներ օգտվել են իրավաբանի ծառայություններից
- 245 երիտասարդ Հայաստանի 13 քաղաքներից ու գյուղերից մասնակցել են սոցիալական արդարության մասին դասընթացներին
- Իրականացվել է 9 ծրագիր (ներառյալ ընդհանուր աջակցության դրամաշնորհը)
- Փինքը հարկ է վճարել է 11,812,908 ՀՀ դրամ ՀՀ պետ բյուջեին

8 փաստ Փինք Արմենիայի մասին

2015թ-ին Փինքը նշեց իր գործունեության 8 ամյակը: Ստորև ներկայացնում ենք 8 փաստ, որոնք պետք է իմանալ Փինքի մասին:

1. Փինքը իրավապաշտպան կազմակերպություն է

Փինքը նվիրված է պաշտպանելու մարդու իրավունքները և վերջ դնելու մարդու իրավունքների ոտնահարումներին: Փինքը աջակցություն է տրամարդում ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերին, որոնք իրավախախտումների զոհ են դառնում, իրականացնում է հետազոտություններ և տարբեր համայնքներին ու շահագրգիռ կողմներին ուղղված լայնածավալ ջատագովություն:

2. Փինքը համայնքահեն կազմակերպություն է

Փինքը ոչ առևտրային կազմակերպություն է, որը ներկայացնում է ԼԳԲՏ համայնքը և ծառայում է համայնքի կարիքների բավարարման համար:

3. Փինք Արմենիայի գրասենյակը ապահով տարածք է բոլորի համար

Ապահով տարածքի ստեղծումը կազմակերպության առաքելության մի մասն է: Փինք Արմենիան ձգտում է ունենալ այնպիսի միջավայր գրասենյակում, որտեղ բոլորն իրենց կզգան ապահով, ցանկալի և ներառված: Ապահով տարածքը հատկապես ԼԳԲՏ մարդկանց համար կարևոր է համայնքի անդամներին հզորացնելու համար՝ հասնելու իրենց ամբողջական ներուժին:

4. Փինքը շեշտադրում է ԼԳԲՏ մարդկանց համախոհների դերը՝ իր առաքելությանը հասնելու գործում

Փինքը գնահատում և կարևորում է ԼԳԲՏ համախոհների աջակցությունը ԼԳԲՏ հավասարության ջատագովության գործում: ԼԳԲՏ համայնքը չի կարող հասնել հավասարության առանց կարեկից և նվիրված համախոհների աջակցության:

5. Փինք Արմենիան, իր անձնակազմն ու անդամները ակտիվ սոցիալա-կան խումբ են

Փինքը ներգրավված է Հայաստանում տարբեր քաղաքացիական, սոցիալական, քաղաքական ու մշակութային նախաձեռնություններում

և շարժումներում: Դրանք անդրադառնում են Հայաստանի Հանրապետության ժողովրդավարության աճի համար կարևոր բազմաթիվ խնդիրներին:

- 6. Մեկ աղբյուրից տրամադրվող տարեկան ֆինանսավորումը չի գերազանցում կազմակերպության ընդհանուր բյուջեի 40%-ը

Կազմակերպության ֆինանսական քաղաքականության համաձայն, ֆինանսական կայունությունն ու անկախությունը ապահովելու համար, մեկ աղբյուրից տրամադրվող տարեկան ֆինանսավորումը չպետք է գերազանցի կազմակերպության ընդհանուր բյուջեի 40%-ը:

- 7. Փինքը ժամանակի և տարածության մեջ հասանելի ծառայությունների ամբողջական փաթեթ է տրամադրում տեղի ԼԳԲՏ համայնքին

Փինքի հիմնադրման ժամանակից ի վեր մենք զգալիորեն աճել ենք և հիմա տրամադրում ենք ծառայությունների ամբողջական փաթեթ տեղի ԼԳԲՏ համայնքին՝ ինչը ներառում է հոգեբանական, սոցիալական աշխատողի, իրավական և սեռական առողջության մասին խորհրդատվությունը և աջակցությունը:

- 8. Կազմակերպության ներսում գործում է ապակենտրոնացված կառավարման համակարգը

Փինքը հորիզոնական կառավարման համակարգով աշխատող կազմակերպություն է, որը թույլ է տալիս ամբողջ աշխատակազմին իրենց փորձառությամբ վերահսկել կազմակերպության համար կարևոր հարցերը: Փինք Արմենիան ընտանիք է, որը միշտ ողջունում է նոր անդամներին՝ դարձնելով ընտանիքն ավելի մեծ:

«Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի 2015թ. ծրագրային և ֆինանսական հաշվետվությունը պատրաստել է Երևանում 2016թ-ին «Զիգրիդ Ռաուզինգ Թրասթի» ֆինանսական աջակցությամբ:

SIGRID RAUSING TRUST

+374 60 377277
info@pinkarmenia.org
www.pinkarmenia.org

Երևան, 2016թ.